



### 183. ԲԵՑԲՈՒԹ ԵՎ ՓԱՌԻ

Վախտին մըն թաքավերի քըղաքում մըն քյասիր կընեկ առնում, էտ կընգանտ մըն տըղա յա հնում, տըսնըվեց-տըսնօխտը տըրեկան։ Այս կընեկը շատ քյասիր կընեկ առնում։ Մըն օր տըղան մորն ասում ա.-Ա մեր, մեր էս թաքավերիս քըղաքումը ինձ մըն հարմար, համարդասխան կործ լիկա, թող ևս քյինամ մըն օրիշ քաղաք, փող ըշխաղեմ, պիրեմ, բալթի մեր սև օրին մըն ճար անենք, ախըր սըհենց քանի մըն խեղճ ը կրակ մընանք։ Մերն ասում ա.-Ա վերթի, տու վես զյուրում, հունց օգում ես, ըրաւ, Մերը տըղին շորը-շիրթը լիվանում ա, ճընհըպի պաշարը թըխում, վեր տըղին ճընհապա քիցի։ Տըղան մորը ծեռքը պաշում ա, մընաս պարկ ասում։ Մերն էլ տըղին իրեսան պաշում ա, քյինաս պարկ ասում, ճընհապա տունում։ Մերը մընում ա տանը, տըղան քյինում աւ Շատ ա քյինում, թա քիչ, հըսնում ա մըն զարիք քաղաք։ Անց կըցավ մըն քյինչա, էրկու քյինչա, մըն շայխընի ուռուջահ եկը։ Զայխընին տերը վեր տըղին տեսնում ա, կանչում ա, ասում.-Այ տղա, եկ ըստեղ, մըն եկ։ Տըղան քյինում ա ընդա կոխելը, ասում ա.-Այ տըղա, հմէն վըս։ Ասում ա.-Քյասիր տըղա եմ, եկալ եմ էս քըղաքումըն մըն ըշխաղանք ճարեմ։ Զայխընին տերն ասում ա.-Նեքյար չե՞ս ինիլ, մըզ հետի ճնիր կըրես, սիրփես, խորակյուտ ըմընեթյը լիվանաս։ Տըղան ասում ա.-Ես չե՞մ ինիլ, քու ասածնիտ կըկաղարեմ։

Վերշը, բըրըշում են, կյինը կըտրում։ Տըղան տառնոնիմ անդրյար։ Մըն էրկու ամիս ըշխաղում ա։ Չայխըննեն տերը տեսնում ա, վեր տըղան շատ լավ ըշխաղում ա, հավաղարիմ ա, առաջ աքաշում, առնիլ-ծախիլի կործը տըլեց տըղին, ինթը ուրան հետի ման էր կյամ։ Տըղան կործը աման հինչ, աման պան ուրան տեղավր տանում էր։ Տըղի անունն էլ թեյրութիւն էր։ Հետքան աստղավեր տուն եկը, վեր շամբիւլնին տերը թեյրութիւն վերթու պես սուրում էր։

Թող թեյրութիւն ուրան կործը առաջ տանի, մընք խաբարն ըշտեղան տանք, Խաբարը համան էտ քըղաքատ տանք։

Էտ քըղաքումբ մըն շատ հարուստ զունուդ ա ունում։ Քտրամալ-դժուվլաթին, դժուվլան-կարողութիւնը ճոնդ ը պունախ լըկար։ Ծշխարքի մըլաք վեսկի-արծաթ օներ։ Հաշվի թա քըղաքին կեաց էտ զունուդին էր։ Զունուդին անումն էլ էլազ էր։ Շատ էլ մեծ վեսկի-ցրծաթի առուստուր օներ։ Զունուդ էլազն էր, ուրան կընեկը, մըն ախճիկ էլ ունին, անումը Փարի։ Օրերան մըն օրը զունուդին կընեկը հիվլնդանում ա, մեշկը տափը տամ, յուրղանի տակ ինուում։ Թանիչ քյունում էր, հիվլնդը ծընդրանում էր։ Հինչ ըրին, լըրին, պան չի տառափ։ Մըն օր էլ կընեկը մարթին կանչում ա, թա։ — Այ մարթ, ես մեռնում եմ, ամմա քըղյիրա մըն վասյաթ նմ տոննում։ իմ մըռնիլաս ետը, շատ եմ խընթըրում, վեր վասյաթըս կըդարես։ ըշխարքի աղաթ ա, հեփ վեր ես մեռնեմ, տու թաղա կընեկ ես պիրիլու, մետք ա՝, վեր ինձ հետի մըն ճոնտ թագան վընդըմաները պիրիր, համման օրը ես հիվլնդացա, հալա էտ վընդըմաներըս վենդիս շեմ քաշալ։ Տու հինչ կընեկ ուզիլի ինես, առաջ իմ վընդըմաներս կլեց տու, թա վեր վենդավն իլավ, հենա կօզես, թա վեր վենդավը շիլավ, օզես վել, էս ա իմ վասյաթս։

Էս վասյաթաս շորս օր հետո զունուդին կընեկը հոքին ծեզ [ա] բաշխում, մեռնում։ Զունուդ էլազը կընդանը առող-փառոք թաղում ա, էրկու ամիս էլ սոքը պահում։ Վեր էրկու ամիս սոք ապահում պըրծնում, նոր ման ա կյամ, վեր ուրան հետի մըն նոր կընեկ օդի։ Շատ կընեկ տեսավ, բըրըշեցին, ամմա դե հու վեր մընդըմաները օզեց կլենա, վենդին եկը վել, յա մեծ էր ունում, յա կումի։ Էս զունուդըս էրկու-իրեք ամիս քաղաք-կյուդ ման եկը, կարեց վել մըն նըհենց կընեկ ճարի, վեր վընդըմաները վենդին փըրունի։ Թոռը փոշման ետ ա տառնում, կյամ տոն։

Ըխճըկանը նըհետ ճաշի են նըստում, վեր հաց օտենն։ Հացա ետը հերն ըխճըկանն ասում ա։ — Փարին կըծեմ, քյինն իխպի-

բան ճհկը պեր: Ախճիկը եր ա կենում, վեր քյինա ճհկը պիրի: Մորը վընդըմաները հորը կոխկին տիրած ա ինում, կլինում ա, տեսնում հալալ հերան վենդին ա, ասում ա.—Հայրիկ, մըն լավ եշի, մամում վընդըմաները հալալ իմ վինդիս են, վեշ մհծ ա, վեշ էլ կունի: Հերն ասում ա.—Ա՛յ ախճիկ, մերըտ ինձ յիրա վասյաթ ա տիրալ, թա հինչ կընեկ ուղիլի ինես, եթե էտ վընդըմաներըտ վենդին փրոնեց, կօգես, փրոնեց վեշ, օգես վեշ, ես էլ էնքան ման եկի, վեշ մընին վենդին փրոնեց վեշ, մընեկ մորտ վընդըմաները թամամ քեզ յիրա յա, ես պետմ ա քեզ օղեմ: Ախճիկն ասում ա.—Ա՛ հեր, ախըր թըհենց հունց կինի՛, տու իմ հերն ես, ես՝ քու ախճիկտ, բա էտ պանտ ամալ եկող պա՞ն ա... Հերն ասում ա.—Ես պան շիմ գյուղում, մորըտ վասյաթն ա թըհենց, վընդըմաները հուր վինդի ինես, ընդան էլ ուղիլու վեմ: Մըհեկ քու վինդավըտ են, քեզ էլ կօգեմ:

Ախճիկը հիշքան ըղաշանք-պըղատանք ա անում հորը, թա էտ խելքատ հեռու կաց, հերը լսեց վեշ.—Զէ՛, վեր չէ՛, քեզ ուղիլու վեմ, վեր ուղիլու վեմ:

Ախճիկը տեսնում ա, վեր էլ հեար շիկա, հորն ասում ա.—Ա՛ հեր, վեր թըհենց ա, ինձ հենգյ օր ժամանակ տու, ընդանա ետը տու քու աստոծըտ, հինչ օգում ես, ըրա: Զհուդ էլազը ըխճըկանը հենգյ օր ժամանակ ա տամ:

Ըստավոտը ախճիկը քյինում ա մըն դժկպյարի կոխկ, թա.—Ինձ հետի մըն լավ սանդուղ շինի: Դժկպյարն ասում ա.—Ես քըզ հետի մըն նըհենց սանդուղ շինեմ, վեր տեսնված շինի:

Էրկու օր ետը ախճիկը եկը տեսավ սանդուղը հազիր ա, փողը տուվավ, քյինաց համբալի ենդա, վեր սանդուղը շելակ տա, տանի: Համբալը պհուրում ա, շելակ տամ սանդուղը, տոն տանում: Համբալին հախը տալան ետը Փարին ասում ա.—Ա՛ համբալ, էրկու սհճաթան ետը կըկյաս ըստեղ, մեր տոն, եթա ես տանը շինեմ, սանդուղը կըշիլակես, կըտանես բազարը, կըժախես, ընդանա ետը կըկյաս, հունց վեր քու հարկն ա, քու հաշիվը կտամ: Համբալին քյինալան ետը Փարին հորը վիեկի-արժաթը լրցնում ա սանդուղը, ինքը նի մըտում մեշը, տոռնը մեշան կապում, ըսպասում:

Էրկու սըհաթան եննը համբալը եկը տեսավ սանդուղը ընդեղ ա, ամմա ախճիկը ընդեղ շի: Մըն պատառ էլ ըսպասեց, ախճիկը եկը վեշ, նոր սանդուղը շիլակեց, քյինաց թըզարումը եր տիրավ, հայ ըրավ, թա.—Լավ սանդուղ եմ ժախում, այ մուշտարի, եկ հա՞... Համբալը վեր կանչում ա. սասը հըսնում ա շայլիխընին

ըռաւշին կազմած Բեյրութին, կյամ ա, թա.—Այ համբաւ, էտ սանդուղք ժախում ըստ Ասում ա.՝ Սախում եմ, հա՛, Փողը տամ ա, առնում պնկրում տոն, շալշիխընին տերն ասում ա.՝ Խազային, մըն տու դությանին եշի, ես թյինամ տեսնամ հինչ քյարվան ա քյանում մեր քաշաքը, սանդուղք զարկեմ իմ մոր Թյունում ա տեսնում մըն քաղրգյան խոշա առուտուրն ըրալ ա պրծալ, քյարվանը կապած քյանում ա համան տըղինց քաղաքը, Բեյրութը քաղրգյանին ասում ա.՝ Բաղրգյան հայրիկ, շատ եմ խնթրում, մըն սանդուղ օնեմ, հարուր մանեթ էլ փող, եր օնես տանես էն քաղաքը, տաս մորըս, թյասիր տըղա եմ, մորըս աշկըն էլ նընհըպի յա, մըն լավություն ա, ըրա, հախը հախ, մինեաթը մինեաթ: Բաղրգյան խոշան ասում ա.՝ Շատ էլ լավ կինի բալա, թյինա պեր սանդուղն էլ, փողն էլ, նամակն էլ, աղբեսը կիրի, տանեմ, մըն կապեկ էլ ա օգում շեմ, էտ իմ լավութունս կինի, կըտանեմ, տնդ կըհըսցընեմ, լափ տու արխային կաց քե մատաղ, բա հինչ մե՞ծ պան ա, քյարվան ա էլի, տառտակ ա քյալու

Բեյրութը քյանում ա սանդուղք պնկրում, կապում են մըն օդտի միշկի, մնաք պարև ասում, քիշում քյանում:

Բաղրգյան խոշան քյարվանին առաջն ինգյած քյանում ա, հըսնում Բեյրութենց քաղաքը Թյունում ա օդտերը շուքըցընում, պետերը եր տոնում, մըն համբաւ կանչում, Բեյրութին սանդուղք հըմբաւին շելակ տամ, տանում ըդրեսավը Բեյրութին մորը տոնը նարում, կյամ: Բաղրգյան խոշան պարի օր ա ասում, նամակը շիրան տոնս օնում, թա.—Այ բույրիկ, ես փըլան քըղաքան եմ, քու տըղատ ընդեղ ընխաղանքի յա, սաղ-սալամաթ, էս նամակս, էս հարուր մանեթս, մըն էլ էս սանդուղս ըմանաթ ա տուվալ, հըլքհալ ըրալ, վիր պիրեմ քեզ տամ, մըհեկ պերալ եմ, աշկըտ լուա ինի, տըղատ սաղ-սալամաթ ա, էս քանի վախտերըս էլ կարող ա կյա:

Պառավը Բեյրութին նամակը պաշում ա, տոնում սրտին, բաղրգյան խոչին էլ հազար օրթնանք տամ, շունուրակալ ունում: Բաղրգյան խոշան տեղ ա թողում, քյանում:

Պառավը սանդուղք տանում ա տոնը: Ինքն էլ հացթուխ էր, ամման ըռավետ քյանում էր ըստուր-ընդուր հետի հաց թըխում: Սանդուղք տոնում ա տանը, օրախ-օրախ քոն ինում, ըռավետը շուտ եր կենում քյանում հերան հաց թըխլում:

Խարարը Փարուն անա տաք, Սանդուղումը, — մեղա ասսուծ, մըտաս թըռալ ա, — հաց ը ճուր եր տըրալ, թաշնա տասը օր սո-

ված կարա՞ր կենար։ Վեր լըսում ա, թա հունց պառավը տունը  
մըցրեց քյինաց, աընդուղին միշան պանում ա, տուս կյամ։ Ետավ  
ակուշկան պանում ա, տեսնում տասը-տըսնըհնգյ տրեկան մըն  
տղա ծերքերը չուրումը, ուրան հետի շուշումըըընիլավ քյինում  
ա, ասում ա։—Բալա, ըշտե՞ղ ըս քյինում։ Ասում ա։—Քյինում եմ  
բազարը։—Դե վեր թըհնեց ա, բալա, քեզ էս մըն մանեթս քըզ  
հնտի խոշկյաբար առ, կեր, էս հենգյ մնեթիս էլ ինձ հնտի մես,  
կըրտուպիլ, պամիղոր առ, պեր, վեր պիրես, աման օր կյաս, քեզ  
օրը մըն մանեթ փող եմ տալու

Տըղան փողը եր ա օնում, քյինում։ Փարին տոնը լըվանում  
ա, թըմըզում, դիշանը տրդան կյամ ա, հինչ վեր զակադ էր տու-  
վալ, պուրում, տամ ա ըխճըկանը։ Լավ-լավ ճաշեր ա էփում,  
ուրան փայն օտում պըրթընում, պըռուպին փայն էլ հազիր յարադ  
տաք-տաք պահում։ Հենց վեր պառավը կյամ ա, վեր տունը պա-  
նա, ախճիկը նի յա մըտնում սանդուզը, տապ անում։

Պառավը տունը պանում ա, մընում արմանք-զարմանք կըտ-  
րած, եշում ա տեսնում թոռնին յիրա էլ ճաշերը ևփած, լափ մը-  
նում ա ժաշկավ ինպյած։ Շատ ա մըտածում, թա էս հինչ պան ա,  
պան չի կըլսի ունպյում, նըստում ա հաց օտում, քոն ունում,  
ըռավետը քյինում ուրան պանին։

Էքյսի օրն էլ ա թըհնեց պըրդահում, էս կընեկս զարմանք-ար-  
մանք կըտրած եր ա կենում, մըն պարիկամ ա ինում, քյինում ա  
էտ պարիկամիտ տոնը, տեսածը պատմում։ Էտ պարիկամը ասում  
ա։—Էքյուց ըռավետը տունը կըպանաս, իփր թա տուս ես կյամ,  
նոր նըհնետ կանես, ետո մըն շոր կըթիցես յիրատ, մըն պունախում  
կընստես, կըյեշես, տեսնաս էտ հի՞նչ պան ա։ Էքյսի օրը տունը  
սոս պանում ա, նհետ անում, յանի թա տուս եկը, ետո մըն շոր  
կըլսին քյինցում, քյինում մըն պունախում պունուրում։ Խիլա  
վախտ վեր անց ա կենում, եշում ա տեսնում տըզին զարկած սան-  
դուղը պաց իլավ, միշան մըն ախճիկ տուս եկը, ախճիկ, հի՞նչ  
ախճիկ, մըն դույա գյաղալի... ըրեվին ասում ա՝ տու տուս մի  
իլալ, ես տուս եկի։ Սանդուղան տուս ա կյամ, էվիլը եր օնում,  
տները սիրփիլավ ինպյում։ Էտ մընուտիտ պառավը շորին տական  
տուս ա կյամ, փըռնում ըխճըկանը պըշպըշորում, թա։—Վա՞յ, ես  
քու եկած ճընճըպիտ էլ մատաղ, քեզ էլ, քեզ ըղարկողին էլ, էս  
հի՞նչ բախտ ա, վեր աստոծ զարկեց ինձ։ Էտ օրատ տենը Փարին  
մըն էլ թեյրութին մերը տառնում են հառթնեն ա ըսկեսուր, լավ  
օտում են, խմում, սերավ, խոշավ, ապրում։

Աւրերան մըն օրը Փարին տեսնում ա ուրանց տանը քիշտին մըն դժող կա, տոն շիկա, պան շիկա, ասում ա.—Նանի, էս վեղս հձնում ա: Պառավին ասում ա.—Մերն ա, Փարի շան: Փարին ասում ա.—Նանի, էս քյէնա տանս մեղ ըպրիլի սաղում շի, կըբյինաս իծցու ուստա կըպիրես, կեսը քար տաշուր, կեսը՝ պատ տինող, մըն իծցու փանչա կըպիրես, մըն տասը փուրգոն կըպիրես, քար կտրող, զում քյացող կըպիրես, թազա տոն պետմ ա շիններ:

Ըսկեսուրը քյունում ա հառթնեն զամբը կատարում՝ ուստափանչան պընըրում, Փարին ուստափինին, փուրգոնշիներին նընես խոսում ա, կյինը կըտըրցընում, տոն շյնիլ տամ: Մըն տարվա միջումը Փարին նընենց տոն ա շիննում, վեր սաղ քըղաքումը թընենց տոն շի կար Ծատանա ետք եկին թազա տանը ծառայ-մասայ փըսնեցին, շահզաղի, բայզաղի տեղ ըսկսեցին ապրել:

Բաղ հարսնա ըսկեսուրը մընան ըտեղ, մենք խաբարը ըշտեղան տաք, խաբարը թեյրութին անա տաք: Էնքան ուրան լավ էր պահում, վեր շայշիսընին տերը Հուրուստացավ, մըն մեծ ճաշարան պացեց, թեյրութին էլ ուրան աշկին լուսին տես սնկում էր:

Մըն օր խաղայինը կյամ ա ճաշարանը, տեսնում թեյրութը ոնքերը ուրութ տուված, դիլիսոր-դիլիսոր նստած: Ասում ա.—Ա՛յ թեյրութ, խե՞ թընենց մթքամուզոր նստած ես: Ասում ա.—Ա՛յ խաղային, ցավս շատ աւ Ասում ա.—Ասի, քըմմատաղ, հինչ ա պըդահաւ, հինչ էլ ինի, ես քու օղածու կանեմ: Ասում ա.—Ա՛յ խաղային, հես ա իրեք տարի յա, ես քու կոխկիտ, մերս թողալ եմ անգար-ընդերու, տու վել մըն հետ ասում շես եր կաց քյինաքու մոր տես, եկ, մընեկ էտ ա մետըս եկաւ, դիլիսոր եմ ինգյաւ, օղում եմ քյինամ մորս տեսության: Խաղայինը ասում ա.—Ծատանաի էլ թընենց լաց ես ունում, թեյրութ շան, էքյուց ըռավետը եր կաց քյինաքու մորըտ տես, մըն ամիս վախտ եմ տամ, կըքինաս, կըտեսնաս, կարոտտ կառնես, կըկյաս:

Էքյսի օրը խաղայինը թեյրութին իրեք տարվա հաշիվը տամ ա, մըն խիլա էլ էվել փող տուվամ, լավ պադրաստություն տեսավ: Թեյրութն էլ խաղեինին բարե մենաս ասեց, ճընհապա ինգավ դիբա ուրանց քաղաքը:

Թեյրութը ճընհապա յա ունդում, քյունում, օբերան մըն օր հըսնում ա ուրանց քաղաքը: Դե ինքը քաղաքին լավ ծանօթ էր, քյունում ա դիբա ուրանց տոնը, տեսիում ա ուրանց տոնը վել կա, վել էլ իլալ ա: Ետ ա եշում, տեսնում ա ուրանց քյէնաս ըխպը-

Հարին տեղը մըն շատ կեղեցիկ տոն շինած։ Փոխ ը փեշման ասում ա։—Հալքաթ ես սխալվալ եմ։ Ես ա տառնում քյունում քըզաքին մելք, մըն համբալ ճարում, ասում։—Այ համբալ, էս հինչ տոնը էս հինչ քյունին լիրա նընանշում ես։ Համբալն ասում ա։—Հա, նընանշում եմ, աման օր էտ տոնըտ եմ քյունում։ Բեյրութն իրեք մանեթ ա տամ հըմբալին թա։—Քեզ էս իրեք մանեթս, ինձ տար էն տոնը նըշանց տու Համբալը Բեյրութին պնկում ա համան տեղը, ըշտեղան մըն խիլա առաջ ինքը ետ էր առաջ Ասում ա։—Տեսնում ե՞ս էս թաղա, նախշում տոնը, էտ էն քյունա արնատոր պատմին տոնն ա, քյունան քանդալ են, թաղան շինալ։

Համբալը քյունում ա, Բեյրութը մթքամուզոր նի ա մըտում հայաթը, պիցրանոնմ բալկոնը, տունը թակում։ Մըն հուրի-մալանգյ ախճիկ տուս ա կյամ, թա։—Համեցեք, եկեք Բեյրութը նի յա մըտում տոն, մորը տեսնում։ Վեր մորը տեսնում ա, ասում ա։—Վայ նանի ջան։ Ասում ա, մորը կուավն ունդյում։ Ուրուր պըշպըշորում են, կարոտ առնում, նըստում զուրուց անում։ Դեշանը զուրուց են անում, օրը մթնում ա, Փարին նաշ ա էփում, շայ քյունցում, տուաբտոն անում։ Մերն էլ Փարուն անա վեշ մըն պան լի ասում տղին։ Բեյրութն էլ վեշ մըն պան լի հըրցընում, ասում ա հալքաթ տուս ինքածի մընն ա, եկալ ա մորը նըհետ հու վա գյուղում հինչ ա անում։ Հացն օտում են, պըրծնում, մերը տըղին ասում ա։—Դե, ետ ա վերթի, քյինա էն մըն ութաղումը քոն իլ։

Բեյրութը քյունում ա էն մըն ութաղումը պրանում, համ էլ մետք անում թա էս հինչ ախճիկ ա, իրես առած, վեր եկալ ա խալխին տանը եր եկալ էտ դարումը Փարին կյամ ա Բեյրութին օթաղը, շորերը հանում, վեր քոն ինի մարթին ծոցումը։ Բեյրութը տանակը հանում ա, տամ ըխճկանը յարալու անում, ետո յուրղանին միշին պըտատում, տեսնում տունում ժամին մըղակումը, ետ տառնում կյամ։ Մերն էլ էտ պանիտ անտեղյակ ա ունում։

Մորը քոնը քիշերը տարավ վեշ, լուսը պինվալուն տես եր կըցավ, քյինաց, վեր տըղին ա հառթին տեսնաւ։ Պյինաց օթաղը, տունը պաց ըրավ, տըռնին ըռաշին արին տեսավ, վայ ըրավ, նի մըտավ օթաղը, տեսավ հառթինը կա վեշ, ասեց։—Ա վերթի, հառթինը հո՞ր ա, տըղան ասեց։—Տումի; յարալու ըրի, տարա տըրա ժամին ըռաշկին։ Մերը լաց իլավ, էրկու ծեռքավ կըլիսին տվեց, աղի-աղի ըրտասունք եր ածեց, լաց ինիլավ ասեց։—Ա վերթի, էն

ախնիկը ախըր քու դարկած ախնիկն էր, վեր մըն վախտ առաջ սանդուղում դարկալ իր: Մըհեկ էս տոնս, տէղս, հինչ վեր կա, էտ ըիսնըկա առած-շինածն ա, ես էտ ըիմնկա պահած, շահածն եմ. թաշնա մըհեկ մնուալ ի, բա տու հունց ըրի՞ր էտ պանըտ, ախ, քուունամ եմ, հունց վեր քուուացա, թեզ ուրուղյունը ըսեցի վել չտ ըիմնկա պաղմությունը, Ախըվախ ըրավ, լաց իլավ, եր ինգավ, հուզը քինաց, Բելրութը հըսկացավ, ծնգնին տուվալով, փուշմանեց, նըհենց մըն ախ քաշեց, վեր թթին մոխը կըլիսավը տուն եկը, յալուխը տուն կալավ, ըռաշին տիրավ, լացըշիվան ըրավ:

Մեր ու տղա թող ախըվիշ ընիլավ մընան, մենք խարարը ըշտեղա՞ն տաք, խարարը Փարում անա տաք:

Լուսը պանվում ա, եղցան զանգերը տամ են, մըն մարթ շնչամ ա, տեսնում եղցան ըռաշին մըն յարալու ախնիկ եր ինգած: Էս մարթըս էտ ըխնըկանըտ եր ա օնում, տանում ուրան տոնը: Դաստին պիժիժկ պան ա պուրում, յարեցը կապում են, ճարամարա տամ, տիրացուն նարեկ ա կառթում, ըխնըկանը վախը օնում են, պահում, շահում: Մըն ամսան ետք Փարին լավ ա տառնում տեղան եր կենում: Տու մի ասիլ, վեր ախնիկը լավ ա տառնում, տիրացուն ան պիժիժկը ուրունք նհետ հա կռւ են անում: Պիժիժկն ասում ա.—էտ ախնիկը ինձ ա հսնում, քանի վեր ըտայարան ես եմ սըղըցըրալ, տիրացուն էլ ասում ա.—Զէ՛, ինձ ա հըսնում քանի վեր էտ ախնիկըտ պենդ վըխնծած էր, ես իմ նարեկավս վախը կալա, լիվիցիրի, ես պիտի տանեմ:

Փարին տեսնում ա, վեր տիրացուն ան պիժիժկը ուրունք մես են օտում, ուրան դառդա ուրունք կըսպանեն, մըն թիշեր եր ա կենում թաքում տեղ թողում, փախչում, քյունում, վեր ուրան կյուլոխն ըզագի:

Ըռավիտը էն տանը, վեր ախնիկը մնացալ էր, եր են կենում տեսնում ախնիկ-պան լի կա, դաստին ոյնկում են, վեր փախալ ար

Տիրացուն ա պիժիժկն էլ վեր գյուղում են ըխնըկա փախնիւլը, եր են կենում, մարթը մըն դոլավ ունդյում՝ քյունում ըխնըկանը ման կյալի: Թող ըտաք ըխնըկանը ման կյան, մեք խարարը ըշտեղա՞ն տաք, խարարը Փարում անա տաք:

Փարին թիշերը քաղաքը թողում ա, փախնում: Շատ ա քյունում, թա թիշ, մըն ինքը կըզիիզա, մըն աստոծ, հըսնում ա մըն սարի տակ, տեսնում ա մըն շորան վեխնարը սարավն ա ըրալ:

ինքն էլ մըն քարի նըստած շուպի ա ածում: էնքան լավ շուպի ա ածում, վեր էս օյիննիս պուրում ա կըլիսին, յանի քու մըն կեծակըտ հինչ ա, վեր զարկում շես տա, ըսպանի: Շատ լաց ինիլան հնդա եր ա կենում, տիյեր աստուծ ասում, տուպիր լորանը, քյունում շուրանին կոխկը, ասում.—Պարի օր, լորան ախոպեր: Չորանն ասում ա.—Ասու պարին, ա քյուր, էս լըրանա սըրերումըս, ժուրերումըս հինչ ես անում, հինչի՞ ես ման կյամ: Փարին ասում ա.—Չորան ախոպեր, հալրաթ աստուծ ա օգալ, վեր ես անդեր-ընդերու էս սարերըս եմ ման կյամ, ես տեր-տըրական շօնեմ, ես էլ շեմ գյունդում, թա հինչի եմ ման կյամ: Չորանն ասում ա.—Վես շօնի, ա՝ քյուր, ես եմ, իմ մերս, քեզ կըտանեմ մեր տոն, իմ նանա կոխկը, տու կինես ինձ քեր, ես քեզ՝ ախոպեր: Փարին էլ ճար շօներ, բըրըշեց: Ուրինգինը հալա ըրկին մին շիշիմարոյ մերմըտիլի տեղ օներ, հըսան տոն, շորանը վեխնարը ուրանց տուրուը մըղրկինի ըրավ, ինքը Փարուն նըհետ քյինաց ուրանց տոն: Մորն ասեց.—Ա՛ նանի, ես քուր շօնեմ, էս ախոպերս աստոծ զարկեց, ինձ քյուր կանեմ, տու էլ լուվ պահի հա՛, հենց պահի, վեր լիրան թող լընատի, հենց ըրա, վեր տոն կյալուց բըմորս օրախ տեսնամ, թա վեր տիսուր իլավ, քզանա շատ կընեղանամ:

Փարին շատ մնաց, թիլ մընաց շուրանին տանը, եշեց, տեսավ ախօր քանի մընա ընտեղ, մընալավ էլ հիրան նըրադակին չի հըսնիլ: Մըն ըռավետ, շնըրերը կյեցավ, հաց կերավ, շուրանին մորը թա.—Ա՛ նանի, ես քյունում եմ ախոպէրը ճիրի: Կոժը եր կալավ, քյինաց, էն քյինալն էր, վեր քյինաց, էլ ետ չի եկը: Չուրանին մերը շատ եշեց, թիլ եշեց, տեսավ ախօր ախոճիկը տոն չի եկը, եր կըցավ քյինաց ախոպէրը, տեսավ կոժը կա, ախոճիկը կա վեշ, հարցըփորց ըրավ, ամմա վեշ մընը տեղը գյունդում չէր, փոխը փոշման ետ տառավ, սոք ըրավ, նստեց:

Ուրինգինը շորանը տոն ա կյամ, տեսնում քյուրը տանը չի, ասում ա.—Ա՛ մեր, հո՞ր ա իմ քերը Մերն ասում ա.—Ա՛ վերթի, վեղը քու մոր կըլիսին, քու քյուր ըռավետը ասեց քյունում եմ ախոպէրը ճիրի, եր կըցավ քյինաց, էն քյինալն էր, վեր քյինաց, հիշքան հըլըհարցում ըրի, սալըդը տվի, ամմա կրացի վեշ նարեմ: Տղան ասեց.—Ա՛ մեր, բալքի քըվորըս նեղություն ես տուպալ: Մերն ասեց.—Ա՛ վերթի, ես քրզանա շատ ի սուրում էն բխնըկանը, հո՞ր քոռուղ-նեղություն տի: Տըղան օնքերը կյունտում ա, լաց ձևում:

Թող շորանը լաց ինի, մենք խարարը ըշտեղա՞ն տաք, խարարը Փարում անա տաք, թա ըշտեղ քյինաց, հինչ ըրագւ:

Փարին շինան տուս ա կյամ, բյունում: Շատ ա բյունում, թա բիշ, ինքն ու աստված կըգյիդան, վերը հըսնում ա մըն յըրանա դուղ, տնս ա եշում, տնս ա եշում, վեշ ինս կա, վեշ շինս Ղահըում ա լաց ունում, թա.—Այս աստոծ, յանի բոլ չի՞, հորիս հանում ես: Շատ վեր լաց ա ունում, յալլուիս ջիրան տուս ա օնում, բրտառունքը սուրփում, եշում տեսնում էտ յըրանա դուղումը մըն ծառ ա յուրովում: Քյունում ա էտ ծառիտ կոխկը, տնսնում ծառին տակին մըն հուվուզ կա, կըրանում ա, հուվուզան ճակ խոմում, իրենը լիվանում, եշում տեսնում մըթենը յիրա ա կոխում: Բիջարած ա ունում, ասում ա:—Վեշ մարթ ա յուրովում, վեշ շին, հինչ անենք.. Նիշ ա ունում ծառը, ծառին տապ անում:

Քիշերը մընամ ա ծառին յիրան: Ըուավետը շիմիտ հետի պարե կյա, տեսնաք Փարում կլիխին հո՞մց ա պացվում: Ըուավետը լուսանում ա, Փարին օզում ա ծառան եր կյա ուրան ճընհապան քյինա, ընջուկովը մըն սան ա ինդյում, եշում ա տեսնում էրկու ծիյավեր ին կյամ: Էլ ծառան եր լի կյամ, ասում ա, թող էս ծիյավերնիս քյինան պրծնեն, նոր եր կյամ:

Միյավերնին կյամ ին հուվուզին կոխկին ծիյանցան եր կյամ, ծիյանքը կպոտում ծառին, ուրանք իրիսնին լիվանում, նըստում հաց օտում: Վեր հըցըրնին օտում պըրծնուում են, հուվուզան ճակ ին խըմում, նոր ծիյանքը ետ անում, պուրում վեր ճակ տան: Վեր օզում են ծիյանցը ճակ տան, ծիյանքը հուվուզին եշում են, խըրթնում, դիբետ-դիբետ քյունում: Միյավերներան մընը շահիլ ա ունում, ասում ա:—Ապեր, ըստեղ մըն պան կա, վեր ծիյանքը ճակ շին խըմում, եշում են հուվուզին, նոր տեսնում, վեր մընըխճկան շափաղ ինդյալ ա ճիրին մեշը, նկարը յուրովում ա, ընդանա ծիյանքը խըրթնալ են: Միյավերներան մեծը ասում ա:—Թաքավերի տըղա, պանին պանը գյիգացի, ծառին եշի, ծառումը պան կա: Եշում են տեսնում ծառին յիրա մըն ախճիկ տապ ըրած: Թաքավերին տըղին ծառան ասում ա:—Ախճի շան, եր եկ ծառան, տեսնաք տու հու վե՞ս, հի՞նչ ես անում էս յըրանա դուղումը: Ախճիկը եր ա կյամ, թաքավերի տըղան ասում ա:—Այսեր, էլ անտեղի ա էս ըխճկանաս հըլըհարցում անիլը, եր օնեքլ ետ տառնաք, լհա ես ինա տու քյունում իք, վեր ինձ հետի հըրթնացունարեր, աստոծ էս ա մեզ զսմաթ ըրալ, եր օնեք քյինաք: Եր են

օնում Փարուն տոնեսում ծիյանցը, ետ տառնում կյամ ուրանց քաղաքը:

Խարարը քյինաց թաքավերին, թա տըղատ հըոթնացու ճարած կյամ ա, թաքավերն ասեց.—Յանի չսքան շո՞ւտ, վեր լըհնենց ա, մըն թող քյինամ տեսնամ հինչ ախճիկ ա: Սի յա նի՞ն ունում, քյժմում տըղին առաջը, եշում ա տեսնում ախճիկ... հինչ ախճիկ, մըն հուրումալագյ, հավան ա կենում, հըլբհարցում անում, թա ըշտե՞ղան ա, հո՞ւր տանա պերիքը: Տըղան պատմում ա թա, սըհնենց, սըհնենց, մըն յըրանա դմէզում, մըն ծառի յիրա քիթանք: Թաքավերն ասում ա.—Հա՛, վեր թըհնենց ա, էս պանիս միշին ըստծո մանդը խառնն ա, պարի պան աւ ծր են օնում, օրախ-օրախ տոն պհներում: Թաքավերն ու թաքուին էլ թուղացին վեշ, վեր Փարին ուրանց կոխսկան մըն աշկը ճըպիլի վախտ էլա հեռու կենա: Թաքավերն էլ տըղին ասեց, վեր ախճիկը անծերը տայու մընա դեշանը քըռասուն օրը, քըռասուն օրան ետը հրսանիք են ընիլուս

Փարին թաքավերին տանը մըն քսան օր մընաց, տառնվ շիմին աշկին ընաւը: Թառլան դուշի պես աշիս էր կյամ թաքավերին բաղումը ման կյամ, քյեփը քաշում: Թաղին տիռներին մըն արար դարառվ կար՝ ծի նստած դարառվ էր անում, էդ գյուրազյուստ սիրահարվում ա Փարուն յիրա, թոնը կըտըրվում ա, դարարը՝ փախնում: Մետքն ա անում, թա հո՞ւմց անի, վեր էտ ըխնըկանըտ փըխնըցընի: Բուառումը պահում ա, մըն օր նի մըտում խաս ըախնան, դիբետան Փարուն փըռնում, պերանը կապում, վաղ տալավ պոհրում տունում ծիյին, նիհ ունում, քյժէշում, փախնում: Նատ ա փախնում, թա քիւ, գյիդալ լեմ, հըսնում ա համան էն սարին, ըշտե՞ղ շորանը վեխճարը ըրըժըցընում էր: Ասում ա համ ես եմ սոված, համ ծիս, համ էլ էս ախճիկս, քյինամ լուբանին անա պատառ հացա, կաթնա ինք օնեմ, օտենք կուշտանանք, դինչանք, նոր քյինանք:

Սին քյժէշում ա, հըսնում շորանին, թա.—Պարի օր, շորան: Զորանն ասում ա.—Պարով եկիր: Համ էլ եշում ա, տեսնում էս ըրաբիս թարթին ախճիկն ուրան հոքեկան քյժէրն ա, սերտը ծլոնդ ա ունում, ամմա սուս ա անում: Փարին էլ ա եշում, տեսնում ախըր էտ շորանըտ ուրան հոքեկան ախպերն ա, ուրխանում ա, ամմա սաս շանում: Արարն ասում ա.—Զորան, կարա՞ս մըն պատառ հացա, կաթնա տաս, օտենք, Զորանն ասում ա.—Իս շի՞մ տալ, ծիյան եր եկիք, էս սըհաթիս կաթնը քըթեմ, հաց փիրթեմ,

կերեք: Արարը ծիլին անա եր ա կյամ, նրստում: Չորանը կաթնը քըթում ա, Հացը փուլթուշ անում, տոնում արարին ըռաշին: Արարը յիրա յա ունում, վեր օտի, շորանը անց ա կենում ըրարին քամակը, Սասումցի Դավիթին պես կոպալ մըհակը եր տանում, յիրա պուրում, Հենց ածում ընջուկտակին, վեր արարը սահսմազ ա տառնում, ասես այսօր չի մեռալ, տասը տարի առաջ ա մեռալ:

Եսո Չորանը փըռնում ա Փարում ծեռքը, ասում.—Ա՛ քնիր շան, էտ ըշտեղ իր կորալ, դե եր կաց քինանը տոն: Վեխճարն առաջն ա անում, Փարում ծիլին յիրա տձևնում, տոն պինքում: Վեխճարն անում ա տուրուզոցը մղակը, ինքը Փարում եր օնում, քյունում ուրանց տոն: Մըղակին հըսած վեշ, ասում ա.—Ա՛ նանի, դե եր կաց, տես հե՞՞ եմ պերալ, քվորս ճարալ եմ: Մերը տոն ա կյամ, օրախ-օրախ խրտուում, Փարում ճակատը պաշում, թա.—Նկած ճընճպիտ մատաղ, բալաս, դե շուստ եկ է... աշկս ճընճպիտ մնացալ:

Տանում են տոն, շահում, պահում:

Թողեք Փարին շուրանին տանը կենա, մեք խարարը ըշտեղա՞ն տաք, խարարը տանեք թեյրութան տաք:

Թեյրութը վերն ա՞, մըն թիթյա յա տառնում: Եր ա կենում քյունում Փարուն հնդա, աշխարքըս ուրինիր օցավ քիցիլավ, լաց ը կոծ ինիլավ: Տու մի ասիլ, Փարուն մինակ թեյրութը չի ման կյամ: Փարուն հնդան ման են կյամ հերը՝ էլազը, պիժիժկը, տիրացուն, մըն էլ թաքավերին տրղան: Դե թող ընդաք ման կյան, մենք խարարը Փարուն անա տաք:

Փարին մըն քանի օր շորան ախապոր տանը կենում ա, ետո մետկը անում, թա.—Ես ըստեղ կընալավ իմ մուրազիս հըսնիլ չեմ, պիտմ ա մըն ճար անեմ: Մըն օր շուրանին ասում ա.—Չորան ախապեր, տու շորանութուն ընիլավ մըն պան շես շինիլ, եկ ինձ լսի, քու իլած-շիլածտ ծախի, նանուն նըհետ քինանը, ես քեզ մեծ բախտի տեր կանեմ: ախապեր շան, տու էրկու հետի ինձ շար դրդարա ըզրդեցիր, բա ես հո՞մց քու մումնաթիտ տական տենա կյամ, օգում եմ քեզ մըն լավություն անեմ:

Չորանը Փարուն լըտում ա, իլած-շիլածը ծախում, Փարուն նըհետ քյունում են ուրանց տոնը: Քյունում են վեր տանը մղակավը նի են մըտում, լըսում են թըխկոց: Ըսկեսուրը տու ա կյամ, եշում տեսնում ուրան հառթըննա ա, կյիժվածի պես պար ա կյամ, վազ տամ հառթին կոլավն ունգում, լաց ունում, ծեռքը փոնած տոնը տանում, նրսուցընում տական-կիլոխ, կըլիան-տակը հըլըհարցում անում: Կարուտը ըռնիլան ետը հըրցընում ա.—Փարին

շան, էս կընեկս ա էս մարթիք հի՞նչ մարթիք են, հո՞ւ վեն... Փարին ասում ա.—Էն իմ հոքու ախապերն ա, էն էլ իմ հոքու մերը, ըտանց արած լավութունը շատ էրդան ա, կարալ շեմ պաղմեմ, մըն թար տու էն զյիդա, վեր էտ մարթը իմ փրգիլ հիլիշտրակն ա:

Ստոր Փարին մին նիրի կռանդ ա քաշիլ տամ ուրանց տանը կոխկը՝ նընհըպին յիրան, ուրան նկարն էլ կախ ա տամ իխապիրին քարան, շորան ախապորն ասում.—ԱՇ ախապեր, ես քեզ խընթըրում եմ մըն քանի օր էս իխապիրիս կոխկին զարառվ քաշեա, հու վեր կյա ճուր խըմի, նըկարըս տեսնա ախ ու վայ անի, թառանչ քաշի, ընդան եր կօնես, կըպիրես իմ տոն, կընստըցընես էս հինչ ութաղումը: Չորանը թըհնց էլ անում ա, իխապիրին կոխկին զարավուկ ա քաշում: Մըն էրկու օրան ետը տեսնում ա հրես մըն խաղայինի պես մարթ, լավ հաքված, կյեցված եկը վեր կըռանան ճուր խըմի, բիրդան տեսավ Փարուն նըկարը, եր թըռավ, թա.—Ախ, թա մըն ծեռուս կինդես, քեզ թիջրա-թիջրա կանեմ, կըռապանեմ: Չորանը տուս ա կյամ, էտ մարթին փրոնում, պղկրում Փարուն ասած օթաղը քյուցում:

Մըն քանի օր ետը պիտիժեկն ա կյամ, ճուր խըմում, նըկարը տեսնում, ախ անում, թա.—Ախ, Փարի, իշկամ քեզ տըսնալու վե՞մ, թա հնա որհնենց հիմ մնալու Չորանը պիտիժեկին էլ ա փըռնում. տանում համան օթաղը քյուցում, էն մարթին կոխկը:

Մըն քանի օրան ետը տիրացուն եկը, Փարուն նըկարը տեսավ, հենց ախ քաշեց, վեր հոքին ուղեց պիտրանալը տուն կյա: Չորանը ըսան էլ փըռնեց, տարավ քիցեց համան օթաղը: Տիրացուին նեղան եկը թաքավերին տըղան, նիաթը կախ, վեր իրեսան մըն լու եր ինդեր, հազար կուտուր կըտառնար: Վեր Փարուն նըկարը տեսավ, նընանչեց, ասեց.—էս նըկարըս իմ Փարուն նըկարն ա, յարաբ կըթիթանամ իմ թառլանիս, թա չէ: Հստում էլ ա շորանը փրոնում տանում համան օթաղը քյուցում:

Մըն քանի օր ետո էլ Փարուն նշանած՝ Բեյրութը բիջարած, կուտրատված, քոռըփոշման ետ ա տառնում, տոն ա կյամ, տեսնում ա Փարուն նըկարը, լաշ ա նիմում, ախըօխ ա անում, ըրտասոնքը սկիրփում, ետո հուշը քյունում ա, եր ինդյում: Վեր ա կենում, անում ա.—Ախ, ես իմ մանդըս տարա, իմ աշկս հընեցի, վեր որհնենց կընդանաս ինդյա: Չորանը Բեյրութին էլ ա քյուցում էն օթաղը:

Փարին լուրանին ասում ա.—ԱՇ ախապեր, մըհեկ էն պանդարկված մառկանցը լավ պահի, լավ ճաշ, լավ խըմիշը տու, թող տեսն-խմեն: Չորանը թըհնց էլ անում ա:

Մըն քանի օրան ետը Փարին մեծ ղոնախլըդի թագարիք ա  
քաշում, վիխնար մոռթում, փլավ անում, կյինի, արաղ պհկրում,  
ըստոլ սարբում: Ետո քղաքին թաքավերին ուրան նազիր-վեզիր-  
ներավը կանչում ա ղոնազ: Զիմուքը կյամ են, նստում: Ղոնախլը-  
զը բաշտամիշ են անում: Թաքավերը նազիր-վեզիրներին նըհետ  
ստում-խմում ա, բյեփ անում: Վեր օտիլ-խմիլը պըրծնում ա,  
ըստոլը հըվաքում են, Փարին կյամ ա թաքավերին ըուաշկին ծեր-  
քերը խաշ ըրած կաղնում, թա: — Թաքավերն ապրած կենա, ես մըն  
կյանդյատ օնեմ, տու պետի կյանդյատս լսես, կտրես: Թաքավերն  
ասում ա: — Շատ լավ, ասի, տեսնամ Հի՞նչ կյանդյատ օնես: Փարին  
ասում ա: — Թաքավեր, ես հենգյ մարթ եմ պանդարկիլ  
տուվալ, խնդիրքս էս ա, վեր մըն-մըն կանչես, ընդանց դազը  
կըտրես: Թաքավերն ասում ա: — Թաշ ուստիս, պեր: Փարին շու-  
րանին ասում ա: — Ջիինա առաջի փոնած մարթին պեր: Չորանը  
քյունում ա Փարում հորը պենքում, կըզնըցընում թաքավերին ըռա-  
շին: Թաքավերը Փարում անա հըրցընում ա, թա: — Հի՞նչ կյան-  
դյատ օնես էս մարթիս անա: Փարին ասում ա: — Առաջ թող էտ  
մարթտ ինձանա հինչ գյունդում ա, մըն-մըն պատմի: Թաքավերը  
շհուդ էլազին ասում ա: — Հինչ գյունդում ես, դուզ-դուզ ասի, թաշի-  
նա սոս ըսեցիր, կյուզոխտ կտրիլ կտամ: Էս մարթս եր ա օնում,  
վըխնիլան հինչ վեր իլալ ա, պատմում ա, թա սըհենց-սըհենց, ես  
ուզեցի ըխճըկանըս օզեմ, ամալ շի եկը, եկի ճրեցի, ըսեցի: — Այ  
մըն ծեռքս ինգես, կուտուր-կուտուր կանեմ, թաքավերը Փարում  
ասում ա: — Դժողո ասե՞ց: Փարին ասում ա: — Հա՛, թաքավեր, դու-  
զը ասեց: Թաքավերը հրամաքում ա, թա: — Ըստան տարեք, էս  
մընին պերեք: Չորանը տանում ա, պենքում պիժիժկին:

Թաքավերն ասում ա: — Ա՛յ պիժիժկ, հինչ վեր հըրցնեմ, դու-  
զը կասես, էս ըխճըկանս անա հի՞նչ ես գյունդում: Պիժիժկին ասում  
ա: — Թաքավերն ապրած կենա, էտ ախճիկտ յարալու էր, ինձ կըն-  
շեցին, վեր կյամ լըրեքը պիժիշկեմ, եկի պիժիշկեցի, ետս սիրահար-  
վեցի յիրան, ուզեցի կնեկ օզեմ, փախավ քիինաց, ես էլ ենդան ինգած  
ման ի կյամ, եկի նըկարը տեսա, ախ ըրի, ինձ փոնեցին, պան-  
դարկեցին: Թաքավերը Փարում ասում ա: — Դժո՞զ ա ասում էս  
մարթս: Փարին ասում ա: — Հա՛, թաքավեր, դուզ ա ասում: Թա-  
քավերն ասում ա: — Պիժիժկ, տու քու պարտքըտ ես կըդարալ, քու  
հախտ հարուրիժում մանեթ ա, քեզ հարուրիժումին տեղ երկուհա-  
րուր մանեթ, քիինա քու պանիտ: Պիժիժկը էրկու հարուր մանեթն  
ինք ա օնում, քյունում:

Ետո տիրացումին են պռնդում: Թաքավերն ասում ա.—ԱՌ տիրացու տու հինչ ես գյուղում էս ըխճշկանաս, դուզն ասի հա՛, վիզտ կպուկեմ, վեր սոտ ես ասալ: Տիրացուն ասում ա.—Թաքավերն, էս ախճիկս յարալու էր, համ էլ պենդ վըխծած, պիժիժկը յըրեցը պիժիժկեց, ամմա վախն անց շի կացավ. ես էլ նարեկ կըրթացի, վախը կալա, լանդ տառավ, ընդանա ետը ուզեցի ինձ հետի օզեմ, եկը վեշ, փախավ, ես էլ ենդան ինգյա, վեր քիթանամ, անշախ փըռնեցին, պանդարկեցին: Թաքավերն ասում ա.—Քու հախըտ հարուր մանեթ ա, քեզ հարուրիժուն մանեթ տամ, ըռիշելըտ քաշի, քինա: Տիրացուն փողը ջուրումըն ա տհնում, քյունում:

Կանչում են թաքավերին արդին: Թաքավերին տըղան նաղլըն ա անում, թա հունց ճարեց Փարուն, հունց կուրցըրեց, ընդետան էլ դիրետն ինգյած ման էր կյամ, վեշ քոն ունի, վեշ թաթար.— Թաքավերը սաղ ինի, էն օրան տեսնա կյիժվածի պես ման եմ կյամ, եկի ըստեղ ըխճշկանը նըկարը տեսա, ճըրեցի, խնթիրս էն ա, վեր արթար դադաստան անեք, ախճիկն ինձ տաք, եր օնեմ, քյինամ: Թաքավերն ասում ա.—Տու թաքավերի տըղա ես, վեշ ախճիկն ա քեզ հըսնում, վեշ էլ փող, հունց եկալ ես, նրհնեց էլ տեղ թողի, քինա, աստուծ քըզ նըհետ: Թաքավերին տըղան տեղ ա թողում, քյունում:

Վերշը կանչում են Փարուն նըշանածին՝ Բեյրութին: Թաքավերն ասում ա.—ԱՌ տըղա, կըխավըտ հինչ անց ա կըցալ, առանցի վըխիլի յա հըմընլելի նազն ըրա: Բեյրութը նստում ա, հինչ վեր կըխավն անց ա կըցալ, նազն անում: Թաքավերը Փարուն ասում ա.—Փարի, էտ տըղիտ ասածնին դուզ ա: Հա՛ թաքավեր, դուզ ա,—ասում ա Փարին: Թաքավերն ասում ա.—Փարին հըսնում ա Բեյրութին, հերձնիր սհեղում են, հերձնիր արժան են, աստոծ պարին կըդարի: Ասում ա, փըսակը կտրում, տեղ թողում, հերան նազիր պեղիրներավը քյունում: Հըրսանեքը օխտն օր, օխտը քիշեր քյունում ա: Էն գյուրբադյոռ էլազը տեղն ու տեղը մեռնում ա: Ընդա հարցստոթումը մընում ա Փարուն նաև Բեյրութին: Չուրանին էլ մըն խիլա հարուատոթում են տամ, տեղ-տոն անում, փսակում, ապրում:

Ընդաց մուրազը ընդըհնեց կըտարվեց, թող ծեր մուրազն էլ ծեր սրտի ուզածին պես կդարվի: